# ՄԻՏԱՆՆԻԻ ԵՎ ՀԱՐԵՎԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ Մ. Թ. Ա. XIV ԴԱՐԻ ՎԵՐՋՈՒՄ—XIII ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

Հ. Մ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

## 1. ԽԵԹԱ-ՀԱՅԱՍՏԱՆԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ ՄՈՒՐՍԻԼԻ II ԵՎ ԱՆՆԻԱ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

*Խուռի-Միտաննիում Շաատիվազայի թագադրումից հետո (մ. թ. ա. 1326 թ.) Միտաննին և նրա համակարգում գտնվող սիրիական և վերին Եփրատյան թագավորությունները ներդրավվում են խեթական պետության աղդեցության ոլորտը։ Սակայն շուտով, նրը մահանում է Սուպպիլուլիումա I թագավորը (մ. թ. ա. 1326 թ. վերջում), տարածաշրջանում փոխվում է քաղաքական իրավիճակը. Սուպպիլուլիումային հաջորդում է նրա որդին՝ Արնուվանդա II-ը (մ. թ. ա. 1326—1325 թթ.), որը մեկ տարի իշխելուց հետո հիվանդանում և նույնպես մահանում է։ Իշխանության դուխ է անցնում Սուպպիլուլիումայի մյուս երիտասարդ որդին՝ Մուրսիլի II-ը (մ. թ. ա. 1325—1303 թթ.)։ Արնուվանդայի իշխանության մեկ տարվա ընթացքում նկատելի չափով թուլանում են խեթական պետության դիրքերը։ Նրանից անջատվում են գրեթե բոլոր ենթակա թագավորությունները։ Այս կապակցությամբ Մուրսիլի II-ը գրում է. «Մինչ իմ հորս գահին բարձրանալը՝ շրջակայքի բոլոր թշնամի երկրները պատերազմ սկսեցին իմ դեմ»[1]։ Այդ թշնամի երկրներից մասնավորապես հիշատակվում են Կիցցավատնան, Աղցավան, Միտաննին, կասկերի ցեղային միությունը և մի շարք այլ պետական կազմավորումներ[2]։ Միաժամանակ Առաջավոր Ասիայում իր հզորությամբ նշանավոր է դառնում Ասսուրական պետությունը։ Ասորեստանի թագավոր Աշշուրուբալիտ I-ը (մ. թ. ա. 1354—1319 թթ.) իր երկրի սահմանները ընդարձակելու նպատակով ռազմական արշավանք է կազմակերպում դեպի հյուսիս։ Ասորեստանի Ադադներարի I թագավորի (մ. թ. տ. 1296—1264 թթ.) արձանագրությունից[3] հետևում է, որ Աշշուրուբալիթը իր արշավանքի ժամանակ առաջին հերթին գրավում է Մեծ Ջար գետի վերին հոսանքի շրջանում գտնվող Մուսրու (Մուծրու) երկիրը, իսկ այնուհետև բախվում է շուբարիների զորքի՝ այսինքն՝ Միտաննիի և Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան շրջանների ռազմամիավորումների հետ[4] և, հավանաբար, հաղթանակ է տանում[5]։*

---

[1] A. Goetze. Die Annalen des Muršilis.—MVAG, 38, 1933, S. 14 (այսուհետև A. Goetze. AM): Նույնի՝ Kizzuwatna and the Problem of Hittite Geography, New Haven, 1940, p. 79. note 323.

[2] A. Goetze. Kizzuwatna..., p. 79, note, 322; Նույնի՝ The Struggle for the Domination of Syria (1400—1300 B. C.), CAH. II, chap. XVIII, 1965, p. 28—29.

[3] IAK, S. 62—64; АВИИУ, № 1, с. 265; ARI. I. № 384.

[4] АВИИУ, № 1, прим 6, с. 265.

[5] A. Goetze. The Struggle..., p. 29.

Խեթական Մուրսիլի II թագավորն իր իշխանության առաջին երկու տարիներին ռազմական գործողություններ է ծավալում խեթական պետության սահմանները ներխուժած կասկերի դեմ[6]։ Այս ճակատում որոշ հաջողության հասնելուց հետո Մուրսիլի II-ը իր թագավորության 3-րդ և 4-րդ տարիներին արշավանքներ է կազմակերպում դեպի հարավ-արևմուտքում գտնվող Արցավա երկիրը և պարտության է մատնում այնտեղ համախմբված հակառակորդներին[7]։ Այնուհետև իր երկրի հյուսիսային շրջանների անվտանգությունը ապահովելու նպատակով Մուրսիլի II-ը կրկին շարժվում է կասկերի՝ այս անգամ Տիպիա երկրի Բիխունիա առաջնորդի դեմ և միայն իր իշխանության յոթերորդ տարում կարողանում է ստիպել նրան ետ քաշվել իր երկրի սահմանները[8]։

Կասկերի դեմ տարած հաղթանակից հետո Մուրսիլին գիմում է Հայասա-Ազզիի Աննիա թագավորին՝ պահանջելով ետ վերադարձնել Սուպպիլուլիումայի իշխանության ժամանակ գրաված խեթական ռազմավարը և գերիներին[9]։ Աննիան, սակայն, մերժում է խեթական թագավորի պահանջը[10]։ Այս պատճառով Մուրսիլի II-ը անցնում է ռազմական գործողությունների։ Նա պաշարում է Հայասա-Ազզիի արևմտյան սահմանների վրա գտնվող Ուրա անառիկ բերդաքաղաքը[11]։ Արձանագրության շարունակությունը վնասված է, ուստի Ուրայի պաշարման հետ կապված իրադարձությունները մնում են անորոշ, բայց, հավանաբար, խեթական թագավորը էական հաջողության չի հասնում, քանի որ հաջորդ տարիներին նա կրկին նույն նպատակով շարժվում է դեպի Հայասա-Ազզի։

Մուրսիլի II-ը ուներ արդեն անհետաձգելի մի պարտականություն՝ կատարել Կումմաննիի խեթաթ դիցուհու երկրպագության տոնը, որը դեռևս նրա հայրը՝ Սուպպիլուլիումա I-ը, պետք է կատարած լիներ։ Ուստի այս նպատակով, իր իշխանության 9-րդ տարում նա մեկնում է Կումմաննի քաղաքը[12]։ Նրան հանդիպելու համար այստեղ է ժամանում եղբայրը՝ Կարքեմիշի թագավոր Շառի-Կուշուխը (Պիասիլին)։ Այս կապակցությամբ Մուրսիլի II-ը գրում է. (28) «[եր]ք ես եկա [Կիցց]ուվատնա (29) [Շառի-Կուշուխը]՝ իմ եղբայրը՝ Կարգամիշ երկրի [թագավորը] դեպի Կիցցուվատնա (30) [ու]ղեվորվեց [ինձ հանդիպելու] և նա ինձ հետ մնաց»[13]։ Մեկ այլ արձանագրությունից հետևում է, որ Կումմաննի քաղաքում Շառի-Կուշուխը հիվանդանում ու մահանում է և այս պատճառով Մուրսիլին հետաձգում է տոնակատարությունը[14]։ Քաղաքական նոր իրադրություն է ստեղծվում։ Հայասա-Ազզիի Աննիա թագավորը հարձակվում է խեթական պետության սահմանների վրա և նվաճում է Իշտիտինա քաղաքը ու պաշարում Կուննուվարան[15]։ Նուխաշշե և Գինզա (Կադեշ) երկրները ապստամբում են խեթերի դեմ և ձեռք են բերում

---

[6] A. Goetze. AM, S. 22.

[7] Նույն տեղում, էջ 44; տե՛ս նաև Նույնի՝ Kizzuwatna ... p. 79; Նույնի՝ The Struggle..., p. 29—30.

[8] A. Goetze. AM, S. 76—97.

[9] Նույն տեղում, էջ 96—97; Տե՛ս նաև Գր. Կապանցյան. Хайаса колыбель армян, Ереван. 1947, с. 29—39.

[10] Նույն տեղում։

[11] Նույն տեղում, էջ 98—99; Գր. Կապանցյան. Хайаса..., с. 30.

[12] Կումմաննին ուշ կատաունյան Կոմանա քաղաքն է, հանդիսացել է Կիցցուվատնայի մայրաքաղաքը և երբեմն էլ կոչվել է Կիցցուվատնա անունով (A. Goetze Kizzuwatna... p. 9—11).

[13] Նույն տեղում, էջ 10—11։

[14] Նույն տեղում, էջ 11, ծան. 47։

[15] A. Goetze. AM, S. 110—111. Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, Երևան, 1951, էջ 9—10։

իրենց անկախությունը[16]։ Միևնույն ժամանակ ասսուրական թագավորներից մեկը ամենայն հավանականությամբ Էնլիլ-Ներարին[17], արշավանք է կազմակերպում դեպի հյուսիս և գրավում է Կարքեմիշ (Կարգամիշ) քաղաքը[18]։ Մուրսիլին թշնամիների դեմ երկու ռազմամիավորում է ուղարկում, մեկը, որը բաղկացած էր 10 հազարանոց հետեակից և 700 մարտակառքից, Նուվանդայի հրամանատարությամբ Հայասայի դեմ[19], մյուսը՝ Ինարաշի հրամանատարությամբ Նուխաշշեի և Կինզայի դեմ, իսկ ինքը Կումմասնիում տոնակատարությունը ավարտելուց հետո իր բանակով շարժվում է դեպի հարավ և Աշտատա երկրում հանդիպում է Պինզայից հաղթանակով վերադարձած Ինարաշ զորավարին։ Նրանք Աշտատայից միասնական ուժերով շարժվում են դեպի Խալեպ և Կարքեմիշ քաղաքները[20]։ Այստեղ Ասորեստանի դեմ ռազմական գործողությունները հաջողությամբ ավարտելուց հետո Կարքեմիշում Մուրսիլին թագավոր է կարգում իր եղբոր՝ Շառի-Կուշուխի (Պիասիլիի) որդուն՝ [...]—Շառումմային[21], իսկ Խալեպում Թելեպինուի որդուն՝ Թալմի-Շառումմային[22]։ Միևնույն ժամանակ Մուրսիլին Եւգարիտում նոր թագադրված Նիկմեպայի հետ վերանայում են դեռևս Սուպպիլուլիումա I-ի և Ուգարիտի նախկին թագավոր Նիկմադդա II-ի միջև կնքված պայմանագիրը և նոր պայմանագիր են կնքում[23]։ Մուրսիլի II-ը հաշտության պայմանագիր է կնքում նաև Ամուրրուի Տուպի-Թեշշուբ թագավորի հետ[24]։ Հավանաբար խեթական թագավորի այս առաջխաղացման մտավախությունից ասորեստանցիները դուրս են մղվում նաև Միտաննիից և Հայկական լեռնաշխարհի հարավ-արևելյան շրջաններից, հավանայնորեն Նահարայան (Միտանիին) ավելի ուշ՝ Կադեշի ճակատամարտի ժամանակ մ. թ. ա. 1274 թ-ին) հանդիսանում է խեթական պետության դաշնակիցը[25]։

Մուրսիլի II-ը արդեն լուր էր ստացել, որ հայասա-խեթական ռազմաճակատում, Հայասա-Ազզիի դեմ Նուվանդան հաղթանակ է տարել[26]։ Ըստ երևույթին, Նուվանդան ընդամենը կանխել էր հայասական բանակի առաջխաղացումը կամ էլ ընդհանրապես պարտվել էր[27], և այս պատճառով Մուրսիլին պատրաստվում է մեծ բանակով արշավանք կազմակերպել դեպի այդ ռազ-

---

16 A. Goetze. AM, S. 110—113.

17 RLA, I, S. 256. Մ. Բ. Ռոուենի կարծիքով արշավանք կազմակերպող Ասորեստանի թագավորը՝ հանդիսացել է Աշշուրուբալիտ I-ը (մ. թ. ա. 1351—1319 թթ.), M. B. Rowton. The Background of the Treaty between Ramsses II and Hattusilis III.—JCS, 18 1959, № 1, p. 4. Սակայն նկատելով նոր կազմված ժամանակագրությունից, Մուրսիլի (մ. թ. ա. 1325—1303 թթ.) իշխանության 9-րդ տարին համընկնում է Էնլիլ-Ներարիի (մ. թ. ա. 1318—1309 թթ.) իշխանության 2-րդ տարվա հետ։

18 A. Goetze. AM, S. 116—117.

19 Նույն տեղում, էջ, 110—111։

20 Նույն տեղում։ Տե՛ս նաև A. Goetze. The Struggle..., p. 31. Ապստամբություն կազմակերպող Կինզայի Այտաղամա իշխանը մահանում կամ սպանվում է Ինարաշի կողմից։ Այտաղամայի որդին՝ Արի-Թեշշուբը (NIG, B.A. Tessub) Ինարաշի հետ ժամանում է Աշտատա և Մուրսիլիի կողմից նշանակվում է Կինզայի իշխան։

21 [...] Շառումմային, հետագայում հաջորդում է նրա եղբայրը՝ Շախուրունուվան, իսկ Շախուրունուվայից հետո, Կարքեմիշում իշխում է Շախուրունուվայի որդին՝ Ինի-Թեշշուբը (PRU, IV, 1956, № 17, 68, p. 115. № 17, 352, p. 121)։

22 A. Goetze. AM, S. 125. Խալեպի թագավորի՝ Թալմի-Շառումմայի հետ Մուրսիլի II-ը պայմանագիր է կնքում։ Այս պայմանագրի տեքստը ժամանակին անհետանում է, ուստի Մուրսիլի II-ի որդի Մուվատալլին կրկին գրել է տալիս այն և կնքում է իր կնիքով (PDK, № 6, S. 80).

23 A. Goetze. The Struggle..., p. 32.

24 PDK, № 5, S. 76 Տուպի-Թեշշուբը, Դու-Թեշշուբի որդին է, Ազիրուի թոռը։

25 ХИДВ, М., 1963, с. 121.

26 Հայ ժողովրդի պատմության քրիստոմատիա. Երևան, 1981, էջ 10։

27 Տե՛ս նաև История древнего Востока II, М., 1988, с. 150.

մաճակատ։ Կարքեմիշից շարժվելով դեպի հյուսիս՝ Մուրսիլին հասնում է Թեգարամա քաղաքը։ Հայասական ռազմաճակատից իր զորքով Թեգարամա է ժամանում նաև Նուվանզա հրամանատարը։ Այս կապակցությամբ Մուրսիլին գրում է. (17) «Երբ ես Կարդամիշ երկիրը ամրացրի

(18) ես Կարգամիշ երկրից բարձրացա

(19) և ճանապարհվեցի դեպի Թեգարամա։ Եվ երբ

(20) ես հասա Թեգարամա, Նուվանզան՝ մատռվակների պետը

21) և բոլոր ազնվականները (հրամանատարները) եկան ինձ հանդիպելու և Թեգարամայում

(22) ինձ միացան։ Ես պետք է գնայի դեպի Խայասա,

(23) սակայն տարին կարճացել էր։

24) Ազնվականները (հրամանատարները) նույնպես ինձ ասացին. «տարին կարճացել է

(25) Խայասա մի գնա, մեր տե՛ր։ Ես Խայասա չգնացի»[28]։

Արձանագրության շարունակությունից հետևում է, որ Հայասա գնալու փոխարեն խեթական թագավորը շարժվում է դեպի Հալիս գետի վերին հոսանքի ավազանը և հնազանդեցնում է այդ տարածքում խեթական պետության դեմ ըմբոստացած և հնարավոր է Հայասա-Ազզիի կողմը անցած առանձին շրջաններ[29]։

Իր թագավորության տասներորդ տարին Մուրսիլի II-ը ռազմական արշավանք է կազմակերպում Հայասա-Ազզիի դեմ։ Նա, ինչպես հայտնում է իր տարեգրության մեջ[30], խեթական Ինգալուվա քաղաքում զորատես է անցկացնում, ապա շարժվում է դեպի արևելք։ Դեռ Հայասա-Ազզի չհասած, հետախուզական ծառայության միջոցով տեղեկանում է, որ հայասական բանակի հրամանատարությունը որոշել է գիշերով հարձակվել խեթական ճամբարների վրա և խուճապի մատնել խեթական ռազմամիավորումներին։ Ուստի Մուրսիլին զգուշանում և համապատասխան պաշտպանություն է կազմակերպում։ Այս հանգամանքը ստիպում է հայասական Աննիա թագավորին փոխել իր ռազմական ծրագիրը՝ խուսափելով չափվել խեթական ռազմական ուժի հետ, նահանջում և ամրապնդվում է անառիկ ամրոցներում։ Շարունակելով իր երթը՝ Մուրսիլին ներխուժում է Հայասայի սահմանները։ Նա առաջին հերթին գրավում է Արիպսա քաղաքը, որը, ըստ տարեգրության, գտնվում էր ծովի կամ ջրի մեջ[31]։ Արիպսա քաղաքի տեղադրության մասին տարբեր կարծիքներ կան, այն տեղադրում են Սև ծովի ափին, Վանա լճի ափին, Վերին Եփրատի ակունքների մոտ, Ծովք (Գելջուկ) լճի ափին[32], և վերջապես Ն. Ադոնցը այն տեղադրում է դեպի Անի—Կամախ տանող ուղիների վրա, Եփրատի ջրերից գոյացած ճահճի մեջ[33]։ Արտահայտված տեսակետներից մեզ հավանական է թվում Ն. Ադոնցի կարծիքը։ Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ Արիպսան գտնվել է ոչ թե լճի կամ ծովի կամ ջրի ափին, այլ, ինչպես վերը նշվեց, հենց ջրի մեջ, այսինքն Արիպսան մի կղզի էր, որին, ջրերի պատճառով, խեթական թագավորը ռազմական տեսակետից կարող էր դժվարությամբ հասնել։ Պետք է նշել նաև, որ երբ այսօր ճանապարհորդում

---

[28] A. Goetze. AM. S. 124—125. Kizzuwatna..., p. 19; Гр. Капанцян. Хайаса..., с. 31. Գոյություն ունի մեկ այլ արձանագրություն, որտեղ հիշատակված է, թե Մուրսիլին պատրաստվում է արշավել Հայասա-Ազզիի դեմ Կիցցուվատնայից (A. Goetze. Kizzuwatna p. 19).

[29] Նույն տեղում։ Ն. Ադոնց. Հայաստանի պատմություն, էջ 42—43։

[30] A. Goetze. AM. S. 130—132; В. Н. Хачатрян. Восточные провинции Хеттской империи, Ереван, 1971, с 133—136.

[31] URU A-ri-ip-ša-aš Š[AG A. A] B. BA ki-it-ta-ri (A. Goetze. AM, S. 132).

[32] Գրականության մասին տե՛ս Հայ ժողովրդի պատմություն. հ. 1, 1971, էջ 191—192։

[33] Ն. Ադոնց, Հայաստանի պատմություն, էջ 45—46։

ենք հիթիտի ափով, ապա հանդիպում ենք բազմաթիվ կղզիների՝ Անատ, Թելլիս (Իրարի հյուսիս-արևմուտքում) և այլն, որոնցից շատերը Թուրքիայի, Սիրիայի և Իրաքի տարածքներում ջրամբարների կառուցման հետևանքով ընկղմվել են ջրի մեջ և անհետացել։ Ուստի, հնարավոր է, որ Առիասան եղել է Անի—Կամախ չհասած հիթիտյան կղզիներից մեկը. Հաջորդ օրը Մուրսիլին Արիոսայից շարժվում է դեպի Դուկկամմա քաղաքը, որը, ինչպես կարելի է ենթադրել, գտնվել է Արիոսայի մոտերքում։ Դուկկամմայի բնակչությունը, ուսանելի դիմադրություն ցուցաբերելու, ընդունում է Մուրսիլիի գերիշխանությունը և պարտավորվում է 3000 դինար տրամադրել խեթական թագավորին[34]։ Դեպքերի զարգացումից խիստ անհանգստացած հայասացիները հարևան շրջաններից նույնպես ներկայանում են խեթական թագավորին և խոստանում ծառայել նրա բանակում և վերադարձնել խեթական գերիներին։

Աշունը մոտենում էր ավարտին և խեթական թագավորը նույնպես խուսափում էր նոր ռազմական բախումներից, ուստի նա վերադառնում է իր մայրաքաղաքը՝ Հայասա-Ազզիի դեմ նոր արշավանքի նախապատրաստվելու մտադրությամբ։

Իր թագավորության 11-րդ տարում՝ մ. թ. ա. 1314 թ. Մուրսիլին կրկին արշավում է դեպի Հայասա-Ազզի։ Խեթական թագավորին ընդառաջ է գալիս Հայասական խալիմանա քաղաքի առաջնորդ Մուտտին և հանձն է առնում ստրկամտորեն ու խեթական գերիներին վերադարձնել։ Մուրսիլին ընդունում է 1000 գերի և վերադառնում իր երկիրը[35]։

Այսպիսով՝ հայասացիները բանակցությունների միջոցով կանխում են խեթական զորքի առաջխաղացումը դեպի Հայասա-Ազզիի կենտրոնական շրջանները և փրկում են իրենց երկիրը ավերածությունից։

Մուրսիլի II-ի 11-րդ տարվա աշնանային ժամանակ (մ. թ. ա. 1314 թ.) Հայասա-Ազզիում թագավորական իշխանություն այլևս չի նկատվում։ Խեթական թագավորը պայքարում է հայասական առանձին քաղաքների առաջնորդների դեմ։ Այս հանգամանքը դուրս է տալիս, որ Հայասա-Ազզի ցեղային միության շրջանակներում մ. թ. ա. XIV դարի վերջում ստեղծվում են նոր պետական կազմավորումներ՝ Դուկկամմա, Խալիմանա, Յուխմու (Սուխմու) Կումմախա և այլն, որոնք աստիճանաբար զարգանալով կարևոր դեր են խաղում տարածաշրջանում պետական իշխանության ձևավորման գործում։

## 2. ԽԵԹԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ, ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ԵՎ ՍԴԻՊՏՈՍԻ ՊԱՅՔԱՐԸ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՈՒՂՈՐՏՆԵՐԻ ԸՆԴԱՐԶԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ Մ. Թ. Ա. XIII ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

Խեթական պետությունում Մուրսիլի II-ին հաջորդում է նրա որդին՝ Մուվատալլի թագավորը (մ. թ. ա. 1303—1273 թթ.)։ Վերջինս իր երկրի հյուսիսային սահմանները կասկերի հետագա ներխուժումներից պաշտպանելու նպատակով իր կրտսեր եղբորը՝ Խաթուսիլիին (3-րդը), Հալիս գետի վերին հոսանքից հյուսիս գտնվող «Բարձր երկրի» իշխան է նշանակում[36]։

Մուվատալլիի թագավորության ժամանակաշրջանում խեթական պետությունը բավականին վնասներ է կրում։ Միաժամանակ իրենց հզորությամբ նշանավոր են դառնում Եգիպտոսը և Ասորեստանը։

Նոր թագավորի 19-րդ ինդաստիայի փարավոնները, մասնավորապես Սեթի I-ը (մ. թ. ա. 1294—1279 թթ.) և Ռամսես II-ը (մ. թ. ա. 1279—1213 թթ.)

---

[34] A. Goetze. AM. S. 136.

[35] Նույն անդում, էջ 138—141։

[36] E. H. Sturtevant and G. Bechtel. A Hittite Chrestomathy. Philadelphia, 1935, p. 5; ХИДВ. М., 1963, с. 327. Խաթուսիլին այնուհետև կասկերից գրաստագրում է Ներիկ քաղաքը և դառնում է այդ քաղաքի բուրմը (История древнего Востока, II, М., 1988, с. 151).

մեծ ջանքեր են գործադրում Սիրիայում իրենց իշխանությունը վերականգնելու համար։

Ասորեստանի թագավոր Ադադներարի I-ը (մ. թ. ա. 1296—1264 թթ.) պատրաստվում է իր ազդեցության ոլորտը ընդգրկել Միտաննին և Հայկական լեռնաշխարհի պետական կազմավորումները։

Առաջին հերթին բախվում են Եգիպտոսի և խեթական պետության շահերը։ Այս կապակցությամբ կարևոր տեղեկություններ են պահպանվել Եգիպտոսի Ռամսես II փարավոնի արձանագրություններում[37]։

Մուվատալլի թագավորը իր շուրջն է համախմբում գրեթե ամբողջ Փոքր Ասիայի, Հայկական լեռնաշխարհի, Հյուսիսային Միջագետքի և Հյուսիսային Սիրիայի ռազմամիավորումներին։ Այս տարածքներում խեթերի հետ դաշնակցած երկրներից մասնավորապես հիշատակվում են՝ Nhrn (Նահարինա Միտաննի), 'Irtw (Արցավան), Drdny (Տրոյա), Kškš (Կասկան)[38], Ms (Մասան), Pds (Պիտասսա=Պեդաս), 'Irwn (Արավանա), Qrkš (Կարկիսան), LK (Լուկկան), Kdwd (Կիլիկիա), Krkmš (Կարքեմիշ), 'Ikrt (Ուգարիտ), Qd (?), Nwgs (Նուխաշշե), Mwsznt (?), Kdš (Կադեշ-Կինզա)[39]։

Դաշնակիցները շարժվում են դեպի հարավ և տեղաբաշխվում են խեթական պետության հարավային ռազմահենադաշտ հանդիսացող Օրոնտ գետի վերին հոսանքի աջափնյակում գտնվող Կադեշ (Կինզա) քաղաքի մոտ։

Առաջավոր Ասիայի պատմության մեջ առաջին անգամ ստեղծվում է այսպիսի մեծ կոալիցիա մեկ պետության դեմ։ Առաջին անգամ Փոքր Ասիայի ծայր արևմուտքի թագավորությունների ռազմիկները հայտնվում են Սիրիայի կենտրոնական շրջաններում՝ Եգիպտոսի դեմ ռազմական գործողություններ վարելու նպատակով։

Ռամսես II-ի իշխանության հինգերորդ տարին էր (մ. թ. ա. 1274 թ.)։ Եգիպտական փարավոնը խեթական պետության դեմ մեծ բանակ է հանում, բաժանում է չորս մասի, որոնց կոչում է եգիպտական՝ Ամոն, Ռա, Պտահ, Սեթ չորս աստվածների անուններով։ Ինքը Ռամսեսը վարում է Ամոն կոչված զորամասը։

Կադեշի (Կինզայի)մոտ Մուվատալլին անսպասելի հարձակում է գործում Ռամսես II-ի՝ Ռա աստծու անունով կոչված զորամասի վրա և խուճապի է մատնում նրան։ Այն ժամանակ Ռամսես II-ը գտնվում էր Կադեշից հյուսիս-արևմուտք՝ Օրոնտ գետի արևմտյան ափին։ Տեղեկանալով Ռա զորամասի անհաջողություններին՝ եգիպտական փարավոնը շտապում է դեպի Կադեշ, բայց Կառեշի մոտ հանկարծ հայտնվում է խեթական 2500 մարտակառքերի շրջափակման մեջ[40]։

Իր արձանագրությունում Ռամսես II-ը նկարագրում է, որ ինքը շրջափակումից դուրս է գալիս հերոսաբար և հաղթանակով։ Սակայն նրա այս նույն արձանագրությունից հետևում է, որ շրջափակման մեջ գտնվելու ժամանակ նրան օգնության են հասնում եգիպտական մյուս զորամասերը և միասնական ուժերով շարունակում են գիմադրել խեթական մարտակառքերին[41]։ Մարար դաղարում է, հակառակորդները վերադառնում են իրենց ղիր-

---

37 ХИДВ М., 1963, с. 119—126 (перевод Н. С. Петровского).

38 Կասկերի ջոկատները պատերազմին մասնակցում են «Բարձր Երկրի» իշխանի՝ խեթուսիլի (III-ի) հրամանատարությամբ (История древнего Востока, II, М., 1988, с. 151).

39 ХИДВ, М,. 1963, с. 121, Հայկական լեռնաշխարհի պետական կազմավորումները Ռամսեսի արձանագրության մեջ չեն հիշատակվում։ Մենք ելնում ենք այն հանգամանքից, որ դրանցից Հայասա-Ազզին դեռևս Մուրսիլի II-ի թագավորության տարիներին, ինչպես վերը նշել ենք, պարտավորվել էր պատերազմի ժամանակ զորք տրամադրել խեթական պետությանը։

40 ХИДВ, М., 1963, с. 122.

41 Նույն տեղում, էջ 125։

ներ։ Այսպիսով, չնայած Եգիպտոսի փարավոնը զավասանքով է նկարագրում իր հաղթանակը, բայց և խեթական թագավորը իրականում չի պարտվում։ Նրա ռազմահենադաշտը, ինչպես առաջ, մնում է Կադեշ քաղաքը։

Երբ խեթերը վերադառնում են իրենց երկիրը, թագավորի եղբայրը՝ Խաթուսիլին (III-ը), կանգ է առնում Կիլիկիայի տարածքում գտնվող Լավգանտիա պաշտամունքային կենտրոն հանդիսացող բնակավայրում։ Այստեղ Խաթուսիլին ամուսնանում է Լավգանտիայի Բենտիպ-Շառի Քրմապետի դստեր՝ Պուդու-Խերայի հետ[42]։ Այսուհետև Մուվատալլին այլևս չի հիշատակվում, հավանաբար նա մահանում է։ Իշխանության գլուխ է անցնում թագավորի որդին հանդիսացող կնոջից՝ Ուրխի-Թեշշուբը (խուռիական անուն է, խեթական անունը Մուրսիլի III է)[43] Խաթուսիլին՝ թագավորի կրտսեր որդին, «մարդ երկրում» հաստատվում է որպես Խակմիս քաղաքի իշխանը[44]։

Այս ժամանակահատվածում Առաջավոր Ասիայի երկրորդ կարևոր իրադարձությունը Ասորեստանի թագավոր Ադադներարի I-ի երկու արշավանքն են Խանիգալբատ-Միտաննի պետության Շատտուարա I (մոտ մ. թ. ա. 1295—1272 թթ.) և Վասաշատտա (մոտ մ. թ. ա. 1272—1268 թթ.) թագավորների դեմ։ Արշավանքների տարեթվերը անորոշ են։ Մինչ Կադեշի ճակատամարտը՝ խեթական պետությունը Առաջավոր Ասիայում իր հզորությամբ առաջնակարգ տեղ էր գրավում և Ասորեստանի թագավորը չէր համարձակվի բախվել խեթերի դաշնակից Միտաննիի Շատտուարա I թագավորի հետ։ Մյուս կողմից, եթե Միտաննին մինչ Կադեշի ճակատամարտը ենթարկված լիներ Ասորեստանին, ապա Կադեշի ճակատամարտում չէր կարող հանդես գալ որպես խեթական պետության օգնական և դաշնակից։ Հետևաբար, Միտաննիի դեմ առաջին արշավանքը Ասորեստանի Ադադներարի I-ը կազմակերպում է խեթա-եգիպտական պատերազմի ժամանակ, երբ միտաննական զորամասերը գտնվում էին Կադեշում խեթերի հետ, կամ էլ, հնարավոր է, պատերազմից հետո, երբ խեթական դաշնակից ցեղատները՝ հոգնած, արդեն զբաղցրվել և վերադարձել էին իրենց երկրները։ Այսպիսի հարմար պահից օգտվելով՝ Ասորեստանի թագավոր Ադադներարի I-ը արշավանք է ձեռնարկում առաջին հերթին դեպի Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան շրջանները[45], իսկ այնուհետև նա շարժվում է դեպի արևմուտք, անցնում է Տիգրիս գետը և ներխուժում է Հյուսիսային Միջագետքի տարածքը։ Նրան հաջողվում է գրավել Տայգա՝ Միտաննիի մայրաքաղաքը (ներկ. Թել-Բրաք)[46],

---

42 Նույն տեղում, էջ 327, № 9 (տեքստի թարգմանությունը խեթերենից կատարել է Վ. Վ. Իվանովը)։ Պուդու-Խերան մի դեպքում համարվում է Կիլիկիայի երկրի դուստրը, մյուս դեպքում Կիլիկիայի Կումմանի (Կոմանա) մայրաքաղաքի դուստրը (A. Goetze. Kizzuwatna.... p 71). Ա. Գյոտզեի կարծիքով Լավգանտիան գտնվել է Կումմանի քաղաքի մոտերքը։

43 ХИДВ, М., 1963, № 10, с. 327.

44 Նույն տեղում, Խակմիս կամ Խակպիս բառարը տեղադրվում է Ամասիայի շրջանում, տե՛ս H. J. Houwink. A New Fragment of the „Deeds of Suppiluliuma as told by His Son, Mursili II.—JNES, XXV, 1966, № 1. p. 29; Նույնի՝ Mursilis North—Western Campaigns. A Commentary.- Fragilia I, 1967, p. 47. Խակմիս Մուվատալլի կողմից արտաքսված էր Ամուրրուի թագավոր Բենդիշինան։ Խաթուսիլին, Բենդիշինայի դստեր հետ ամուսնանալով էլ իր որդուն, իսկ հետագայում, երբ Խաթուսիլին թագավոր է դառնում, ապտա է արձակում Բենդիշինային և վերահաստատում է նրան որպես Ամուրրու երկրի թագավոր, միաժամանակ նրան կնության է տալիս իր դստերը և նրա հետ ռազմական փոխօգնության պայմանագիր է կնքում (TDK, № 9, S. 124; R. T. O'Gallaghan. Aram Naharaim. Roma, 1948, p. 99); История древнего Востока, II, М., 1988, с. 151.

45 IAK, S. 56—58.

46 D. Oates. Excavations at Tell Brak 1983—1984.—Iraq, № 47, 1985, p. 169—172; J. J. Illingworth. Inscriptions from Tell Brak 1986.—Iraq, № 50, 1988, p. 107.

*Շուրա (Սուրա-Միգիատից հյուսիս-արևմուտք)*[47], *Կախատ*[48], *Ամասակա, Խուռա, Շադուխա, Նաբուլա*[49] *Ուշշուկանի (Վաշշուկանի, Միտաննիի առաջին մայրաքաղաքը ներկ. Թել-Ֆախրիայի մոտ), Իրրիդե (Խառանի և Կարքեմիշի միջև), Էլուխատ*[50], *Սուդա (Սուտա-Շուտա, Միտաննիի հյուսիս-արևմուտքում), Խառան, Գարդամիշ (Կարքեմիշ) քաղաքները*[51]։ *Ադադներարին գերեվարում և Ասորեստան է տանում Միտաննիի թագավոր Շատտուարա I-ին։ Վերջինս, սակայն, արձակվում և որպես թագավոր վերադառնում է իր երկիրը, Ասորեստանին տարեցտարի հարկ վճարելու պայմանով։ Ադադներարի I-ը հաղորդում է.*

e-nu-ma $^{m}$Šá-at-tu-ar-r [a] 8) LUGAL $^{KUR}$Ḫa-n [i-g] al-bat it-ti-j [a] 9) ik-ki-ru-ma za-e-[r] u-ti e-[p] u-šu 10) i-na qí-bi-i [t A] š-šur E[N]-ja 11) a-lik re-si-j [a] ù DINGIR $^{MEŠ}$GAL $^{MEŠ}$-(ti ?) 12) ma-lik da-mi-iq-t [i-ja, aṣ-ba-as-su-ma 13) a-na URU-ja A [š-šu] r ub-la-aš-su 14) ú-ta-am-mi-šu-ma a-na KUR-šu ú-me-sir-šu 15) šá-at-ti-ša-am-ma a-di bal-ṭu 16) ta-mar-ta-šu i-na qe-re-eb 17)URU-ja Aš-[š] ur i [u] am-da-ḫa-ar

*«...Երբ Շատտուարան՝ Խանիգալբատի թագավորը, ըմբոստացավ և թշնամանք տածեց (իմ նկատմամբ)։ Աշշուրի իմ տիրոջ՝ ինձ հովանավորողի և մեծ աստվածների՝ ինձ բարի խորհուրդ տվողների հրամանով ես նրան բռնեցի և բերեցի նրան Ա[շշու]ր՝ իմ քաղաքը։ Ես ստիպեցի նրան երդվել և թույլատրեցի (նրան) գնալ իր երկիրը, (որ) տարեցտարի, քանի նա կենդանի է իմ Աշշուր քաղաքում ստանամ նրա հարկը»*[52]։

*Շատտուարայի թագավորությունից հետո Միտաննիում իշխանության գլուխ է անցնում նրա որդին՝ Վասաշատտա թագավորը (մոտ մ. թ. ա. 1272—1268 թթ.)։ Նա ապստամբություն է կազմակերպում ասսուրական իշխանության դեմ և ձեռք է բերում իր անկախությունը։ Ադադներարին շուտով ռազմական արշավանք է ձեռնարկում դեպի հյուսիս։ Վասաշատտան դիմում է խեթական թագավորի, հավանաբար Ուրխի-Թեշշուբի (մ. թ. ա. 1273—1267 թթ.) օգնությանը։ Սակայն վերջինս հավանաբար զբաղված լինելով այլ խնդիրներով, որոշում է ձեռնպահ մնալ Ասորեստանի հետ ռազմական բախումից։ Ուստի Միտաննիի թագավորը խեթերից օգնություն չստանալով, ստիպված մեն-մենակ դիմադրավում է ասսուրական զորքին։ Ասորեստանի թագավոր Ադադներարիին հաջողվում է պարտության մատնել Վասաշատտային և վերանվաճել Միտաննի երկիրը (մ. թ. ա. 1268 թ.)։ Այս տեղեկությունները մեզ հայտնի են դառնում Ադադներարի I-ի արձանագրության հետևյալ հատվածից.*

18) ar-ki-šu $^{m}$[U-a-sa]-ša-at-ta DUMU-šu 19) ib-bal-ki-ta-ma it-ti-ja ik-ki-ir 20) u za-e-ru-ti e-pu-us 21) a-na $^{KUR}$Ḫa-at-ti a-na re-ṣú-ti 22) il-li-ik ḫa-at-u-ti-ti šu 23) il-qí-ma re-ṣu-šu ul e-pu-uš 24) i-na $^{GIŠ}$TUKUL

---

[47] Н. В. Арутюнян. Топонимика Урарту. Ереван, 1985, с. 173.

[48] *Կախատ քաղաքը տեղադրվում է Թել-Բարիի մոտ, Ջակչակ գետի ափին* J. M. Munn-Rankin. Assyrian Military Power 1300—1200 B. C., CAH, II 1967. chap. XXV, p. 7.

[49] *Նաբուլան նույնացվում է ներկայիս Նիբլի հետ, Մծբինից 25 կմ հյուսիս-արևելք* (PAR, S. 21; Ն. Ադոնց. *Հայաստանի պատմություն, էջ 51*)։

[50] *Էլուխատ քաղաքը նույնացվում է Աշշուրնասիրապալ II-ի արձանագրության Խալցիլուխա քաղաքի հետ, որը տեղադրվում է Ամիդ-Դիարբեքրից դեպի հարավ, Տիգրիս գետի աջ ափին* (Н. В. Арутюнян. Топ. Урарту, с. 220—221).

[51] IAK, S. 58—60.

[52] E. F. Weidner. Die Kampfe Adadnararis I gegen Ijanigalbat.—AfO, V, 1929 Heft 2/3, S. 90.

[illegible]dan-nu-ti ša $^{D}$Aš-šur EN-ja i-na tu-kul-ti ša $^{D}$A-nim $^{D}$EN-lil $^{D}$É-a $^{D}$Sin $^{D}$UTU $^{D}$IŠKUR $^{D}$Iš-tar u $^{D}$Nergal ka-aš-ka-aš DINGIR$^{MEŠ}$ DINGIR$^{MEŠ}$ ra-aš-bu-ti EN$^{MEŠ}$-ja $^{URU}$Ta-i-da URU LUGAL$^{ti}$-šu ra-ba-a $^{URU}$A-ma-sa-ka $^{URU}$Ka-ha-at $^{URU}$Šu-ri $^{URU}$Na-bu-la $^{URU}$Hu-ur-ra $^{URU}$Šu-du-ha ù $^{URU}$Uš-šu-ka-na ak-šu-ud aš-bat nam-kur URU [illegible] ša-tu-nu ni-ki-im-ti ab-be-šu ni-şir-ti É-GAL $^{lim}$-šu al-qa-am-ma a-na URU-ja [Aš-šur] ub-la

*«Նրանից հետո (Շատտուարայից հետո—Հ. Ա.), Վասաշատտան՝ նրա որդին, դայրացավ, ինձ հետ թշնամացավ և թշնամանք տածեց (իմ նկատմամբ)։ Նա դնաց խաթթի երկիր օգնություն խնդրելու (նպատակով)։ Խեթերը նրա կաշառքը վերցրին, բայց օգնություն նրան չցուցաբերին։ Իմ տիրոջ՝ Աշշուրի կատարյալ դենքով, Անու, Էնլիլ և Էա, Սին, Շամաշ, Իշկուր, Իշտար և Ներգալ հզոր աստվածների, ահեղ աստվածների, իմ տերերի աջակցությամբ— Տայդա նրա մեծ թագավորական քաղաքը, Ամասակա, Կախատ, Շուրա (Սուրա), Նարուլա, Խուռա, Շուդուխա և Ուշշուկանի քաղաքները հաղթահարեցի, նվաճեցի։ Այս քաղաքների ունեցվածքը, նրա հայրերի պաշարները, նրա պալատի դանձը վերցրի, [Աշշուր]՝ իմ քաղաքը բերեցի...»*[53]։ *Արձանագրությունից Վասաշատտայի ճակատագիրը մնում է անորոշ և ընդհանրապես նա այլևս չի հիշատակվում։ Արձանագրության շարունակությունից հայտնի է դառնում, որ Միտաննական թագուհին, նրա որդիները և նրա դստերը, որոնք գտնվում էին Իրրիդն քաղաքում, գերի են տարվում Ասորեստան. այս մասին Ադադներարին գրում է.*

a-na ša-a-šu D [A] M É-GAL-šu 49) DUMU $^{MEŠ}$-su DUMU [MI] $^{MEŠ}$-šu ù um-ma-na-ti-šu iš-tu $^{URU}$I [r]-ri-di ù-[še-s] i šu-nu-ti šal-lu-su-nu ka-mu-šu-nu ù nam-kur-šu a-na URU-ja Aš-šur ub-la $^{URU}$Ir-ri-di u URU $^{MEŠ}$ š [a] p [a-a] i $^{URU}$Ir-ri-di ak-su-ud aš-ru-up ù aq-qur:

*«...Ինչ վերաբերում է նրան (Վասաշատտային—Հ. Ա.), (ապա) նրա թագուհուն (բառ. պալատի կնոջը), նրա որդիներին, նրա դստերին, նրա մարդկանց դուրս բերեցի Իրրիդն քաղաքից, նրանց ռազմավարը (կենդանի), նրանց բանտարկյալներին և նրա ունեցվածքը բերեցի իմ քաղաքը՝ [Աշշուր]։ Իրրիդն բաղարը և Իրրիդնի սահմանին գտնվող քաղաքները նվաճեցի, այրեցի և ոչնչացրի...»*[54]։

*Խաննիդալբատ-Միտաննիին իրեն ենթարկելուց հետո Ադադներարի I-ը նամակ է գրում ոմն խեթական թագավորի։ Նամակում բաբելական ջերմ խոսքերով Ասորեստանի թագավորը դիմում է խեթական թագավորին՝ նրան հայանելով Միտաննիի թագավորի դեմ տարած հաղթանակի լուրը և Ամմանա (Ամանոս) լեռներին այցելելու իր ցանկությունը։ Ադադներարիի նամակը մեզ չի հասել։ Հիշյալ տեղեկությունները մեզ հայտնի են դառնում խեթական թագավորի պատասխան նամակից, որը գրված է Միտաննիի Վասաշատտա թագավորին հաղթող Ասորեստանի թագավորին, իսկ Վասաշատտային հաղթողը, ինչպես վերը նշել ենք, եղել է Ադադներարի I-ը։ Այս կապակցությամբ հետաքրքիր է պատասխան նամակի հետևյալ հատվածը. «Դու խոսում ես Վասաշատտայի՝ մեծ թագավորի և Խուռի երկրի այլևս գոյություն չունենալու մասին։ Այո՛, դենքով դու հաղթեցիր, այո՛, իմ օգնականին դու հաղթեցիր,*

---

53 Նույն տեղում։

54 Նույն տեղում։

այո՛, այժմ դու մեծ թագավոր ես։ Սակայն ինչո՞ւ դու այլևս խոսում ես եղբայրության և Ամմանա լեռները տեսնելու մասին, այս ի՞նչ եղբայրություն է...»[55]։

Խեթական թագավորի անունը նույնպես չի հիշատակվում։ Հետազոտողների մեծամասնության կարծիքով պատասխան նամակի հեղինակը Խաթուսիլի III թագավորն է (մ. թ. ա. 1267—1236 թթ.)[56]։

Նամակի բովանդակությունից հետևում է, որ խեթական թագավորը մերժում է Ասորեստանի թագավորի Ամանոս լեռներին այցելելու առաջարկությունը և ձեռնպահ է մնում Ասորեստանի հետ որևէ քաղաքական կապ հաստատելուց։ Այս մասին խեթական թագավորը իր նամակի վերջում ասում է. «...Ինչպես իմ [հայրը] և իմ պապը Աշշուրի թագավորին [եղբայրության մասին] չէին գրում դու նույնպես ինձ չպետք է գրես մեծ թագավորության և [եղբայրության մասին]»։

Խաթուսիլի III-ը ոչ միայն կանխում է Ադադներարի I-ի առաջխաղացումը, այլև ինչպես ստորև կտեսնենք, ստիպում է նրան դուրս քաշվել Միտաննիի և Հայկական լեռնաշխարհի սահմաններից։

Ոմն խանիդալբատ-Միտաննիի թագավոր նամակ է հղում խեթական մի փոխարքայի՝ հիշեցնելով նրան, որ նա շուբրիների թագավորի հետ միասին Ադադներարի I-ի իշխանության ժամանակ գրավել են խանիդալբատ երկիրը և շուբրիների թագավորը գրավել է խանիդալբատի գահը[57]։

Այստեղ պարզ է, որ նամակը գրվել է Ադադներարի I-ի թագավորությունից հետո, իսկ Ադադներարիից հետո Միտաննիի օրինական թագավոր է հանդիսացել Շատտուարա II-ը։ Նամակում հիշատակվող շուբրիները Ադադներարի I-ի արձանագրության շուբարիներն են[58]։

Շուբարիներ ասելով Ադադներարին նկատի ուներ հիմնականում Հյուսեսային Միջագետքի և Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան շրջանների բնակչությունը[59]։ Սակայն վերոհիշյալ նամակում հիշատակվող շուբրիները Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան շրջանի բնակիչներն են, իսկ շուբրիների թագավորը, հետազոտողների կարծիքով, եղել է Այզիի թագավորը[60], չնայած չի բացառվում, որ նա լինի հետագայում Սասունի տարածքում հիշատակվող Շուբրե երկրի թագավորը։ Փաստորեն, սա խեթական պետության և Հայկական լեռնաշխարհի պետական կազմավորումների մի դաշնակցություն է Վասաշատտայի պարտությունից հետո Միտաննին Ասորեստանի լծից ազատագրելու համար։ Պատերազմի արդյունքների մասին տեղեկություններ մեզ չեն հասել։ Սակայն Վասաշատտայից հետո Միտաննիի Շատտուարա II թագավորի Ասորեստանից անկախ լինելու փաստը հաստատում է, որ խեթական և Հայկական լեռնաշխարհի զորամիավորումները հաղթել են ասորեստանցիներին և դուրս են մղել նրանց Միտաննիի սահմաններից։ Այս դեպքերը, հավանաբար, տեղի են ունեցել Խաթուսիլի III-ի իշխանության առաջին տարում (մ. թ. ա. 1267 թ.-ին)։ Հնարավոր է, որ այս հաղթանակից հետո Միտաննիի գահին ժամանակավորապես նստել է ոմն

---

55 KUB, XXIII, 1 2. Նամակը թարգմանվել է Է. Ֆոռերի, իսկ հետո Է. Վայդների կողմից. RLA.S. 262 (E. Forrer), E. F. Weidner. Wasasatta, Konig von Ijanigalbat AfO. 6, 1930, № 1, S. 21; A. Goetzs. The Struggle.., p. 46.

56 RLA, S. 262 (E. Forrer); Ա. Խաչատրյան. Հայաստանի սեպագիր շրջանի պատմություն, էջ 426; M. B. Rowton. The Background of the Treaty between Ramesses II. and Hattusilis III.—JCS. 13. 1959, № 1, p. 10; A. Goetze. The Struggle.., p. 46; E F. Weidner, Assyrien und Ijanigalbat.—Ugaritica, VI, 1969, S. 530.

57 RLA, S. 258 (E. Forrer); Ա. Խաչատրյան. Հայաստանի սեպ. շրջ. պատմություն, էջ 422; E. F. Weidner. Assyrien und Ija igalbat..., S. 523.

58 IAK. S. 58, 64; АВИИУ, № 1, e. 265.

59 АВИИУ, № 1. с. 263, прим. 6.

60 И. М. Дьяконов. Предыстория армянского народа, Ереван, 1968, с. 96—97.

շուբրիների թագավորը, բայց այնուամենայնիվ Վասաշատտայից հետո Միտաննիի օրինական թագավոր է հաստատվում Շատտուարա II-ը (մոտ մ. թ. ա. 1266 թ.-ին)։

Այս հաջողություններից հետո Խաթուսիլի III-ը փորձում է բարելավել իր հարաբերությունները Ասորեստանի նոր թագավոր Սալմանասար I-ի հետ (մ. թ. ա. 1263—1234 թթ.)։ Այս նպատակով նա երկու նամակ է գրում, առաջինը՝ Սալմանասար I թագավորին, երկրորդը՝ Սալմանասարի ռազմահրամանատար Բաբա-ախի-իդինին[61]։ Սակայն Ասորեստանի և խեթական պետության միջև բարիդրացիական հարաբերություններ չեն ստեղծվում։ Ասորեստանի թագավորը պատրաստվում է ռազմական մեծ արշավանք կազմակերպել դեպի Հայկական լեռնաշխարհի և Հյուսիսային Միջագետքի քաղաքները։

Բողազքյոյից մեզ հասել է Խանիգալբատ-Միտաննիի թագավորի մեկ այլ նամակ՝ այս անգամ իր ոմն բարեկամ և հովանավոր խեթական թագավորին։ Նամակում Խանիգալբատի թագավորը գրում է.

(1) «Արևին, իմ հորը, ասա
(2) խոսում է Խանիգալբատ երկրի թագավորը, քո որդին
(3) Արևին՝ իմ հորը հույժ ողջույն
(4) Արևի, իմ հոր վրա հույս եմ դնում
(5) ես այժմ ասում եմ հետևյալը—այսպես
(6) իմ հայրը՝ Արևը թող խոսի հետևյալը—«դիտեմ»։
(7) Իսկ ես իմ հոր նկատմամբ ի՞նչ
(8) մեղք եմ գործել, բայց Խալպա-ցիտի Խալպայի թագավորը,
(9) (և) Էխլի-Շառումա Իսուվայի թագավորը իմ դեմ [...]
(10) եթե մարդը ունի երկու մեղադրող,
(11) մեկը դրանցից մոտենում է, իսկ մյուսը չի՞ մոտ[ենում] արդյոք։
(12) Այժմ Աշշուրի թագավորը, իմ թշնամին
(13) հարցրեց և ինչպես Իշկուրը իմ տերը
(14) կատարեց, Արևը իմ հայրը արդեն գիտի։
(15) Ես գտնվում եմ Շինամու[62] քաղաքում
(16) և Էխլի-Շառումա իր պատվիրակին
(17) (...) իմ մոտ ուղարկեց ասելով
(18) Արևի ծառաները իսկապես զայրացել են»[63]։

Նամակում հիշատակված Խալպայի Խալպացիտի և Իսուվայի Էխլի-Շառումա թագավորների իշխանության ժամանակը անորոշ է։ Խալպացիտին թագավորել է Թելեպինուի որդուց՝ Թալմի-Շառումայից հետո ընկած ժամանակաշրջանում, իսկ Թալմի-Շառուման թագադրվել է Խալպայում, Մուրսիլի II-ի իշխանության 9-րդ տարում։ Էխլի-Շառուման Արի-Շառումա թագավորի որդին է և նրա հաջորդը։ Ըստ որոշ տվյալների նա թագավորել է Իսուվայում, Խաթուսիլի III և Թուդխալիա IV թագավորների իշխանության տարիներին[64]։

Վերոհիշյալից և նամակի բովանդակությունից կարելի է եզրակացնել, որ նամակի հեղինակն է Շատտուարա II-ը, իսկ խեթական թագավորը, որին գրվել է նամակը, Խաթուսիլի III-ն է[65]։ Նամակից հետևում է, որ Խանիգալբատի թագավորը նեղ կացության մեջ է հայտնվել, մի կողմից բարդություններ են ստեղծվել նրա և նրա հարևան Խալպա երկրի Խալպացիտի և Իսու-

---

[61] RLA, S. 267 (E. Forrer).

[62] Այս արձանագրությունում հիշատակվող Շինամու քաղաքը հավանաբար գտնվել է Հյուսիսային Միջագետքում։

[63] H. Klengel. Zum Brief eines Königs von Ḫanigalbat (IBoT I, 34).—Orientalia, vol. 32. 1963. № 3, S. 280.

[64] Նույն տեղում, էջ 289։

[65] M. B. Rowton. The Background of the Treaty between Ramesses II and Hattusilis III, p. 10, note 43.

մալի էխլի-Շառումա թագավորների հարաբերությունների մեջ, մյուս կողմից Ասորեստանի թագավորն է նրան նեղում իր նվաճողական քաղաքականության ծրագրերով։ Այս նամակով, փաստորեն, խանիռատաի թագավոր Ասորեստանին պաշտպանվելու համար օգնություն է խնդրում խեթական թագավորից։ Հակասասուրական դաշինք ստեղծելու և օգնություն խնդրելու նպատակով խանիդալբատի թագավոր դիմում է նաև Սիրիայում Միտաննիի հարավանությամբ հաստատված ախլամու-տրամեական արևմտասեմական ցեղերին[66]։ Ասսուրական թագավորության առաջխաղացման մտավախությունից, հավանաբար, խաթուսիլի III-ը և Եգիպտոսի Ռամսես II փարավոնը (մ. թ. ա. 1279—1213 թթ.) նպատակահարմար են ոտնում վերջ տալ խեթա-եգիպտական հակասությանը ռազմական գործողություններին։ Նրանք մ. թ. ա. 1258 թ. Ռամսես II-ի իշխանության 21-րդ տարում հաշտության պայմանագիր են կնքում, որի համաձայն երկու թագավորները իրաղաղություն են հաստատում և պարտավորվում են թշնամու դեմ միմյանց ռազմական օգնություն ցուցաբերել[67]։ Այսպիսով՝ երկու երկրների միջև ստեղծվում են բարեկամական կապեր։

Խեթա-եգիպտական պայմանագրի կնքումից հետո խեթերի և ախլամու-արամիացիների ռազմամիավորումները շարժվում են դեպի Միտաննի, Ասորեստանի դեմ ընդհանուր հակատ կազմելու նպատակով[68]։ Դաշնակիցներին միանում է նաև Կարքեմիշի Ինի-Թեշշուբ թագավորը[69]։

Ասորեստանի թագավոր՝ Սալմանասար I-ը, առաջին հերթին արշավանք է կազմակերպում դեպի Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան շրջաններ։ Այստեղ նա պատերազմական գործողություններ է վարում նորաստեղծ Ուրուատրի ցեղային միության և Մուծրու (Մուսրու) երկրի դեմ. «...Այն ժամանակ իմ քահանայապետության սկզբին (քահանայապետ դառնալու ժամանակ) ուրուատրեցիները (ուրատրեցիները) ըմբոստացան։ Աշշուրին և մեծ աստվածներին՝ իմ տերերին ձեռքս վեր կարկառելով, իմ զորքի հավաքը կազմակերպելով։ Նրանց (ուրուատրեցիների) բարձր լեռնագագաթները ես բարձրացրա, Խիմմե, Ուատկուն, Մաշգուն, Սալուա, Խալիլա, Լուիսա, Նիլիպախրի ու Զինզուն՝ 8 երկրներին և նրանց ռազմական ուժը գրավելով, նրանց 51 քաղաք ավերելով, հրկիզելով, գերիներին և նրանց ունեցվածքը հափշտակելով, զոյգ ուրուատրեցիներին հրեց օրվա ընթացքում Աշշուրի՝ իմ տիրոջ ոտքին խոնարհելու։ Նրանց գավակներին (...?) բռնելով, տարա ծառայության և իմ ուժեղությունը (համար), լեռների ծանր տուրքը ստացա վրա։ Առիննա քաղաքը. ամուր վայրը, բարձր լեռնիցում, որը առաջ ըմբոստացավ (և) առհամարեց Աշշուրին, այս քաղաքը Աշշուրի և մեծ աստվածների՝ իմ տերերի օգնությամբ նվաճելով, ավերելով և մոխիրը դրա վրա շաղ տվեցի, որպես հոր Աշշուրի՝ իմ քաղաքի դարպասների մոտ շաղ տվի. հետևանքի համար սահմանեցի։ Այն ժամանակ Մուծրու երկիրը ամբողջությամբ խոնարհեցի Աշշուրի՝ իմ տիրոջ ոտքի առաջ»[70]։

Ուրուատրի տիրապետության երկրները տեղադրվում են Առևելյան Խարուր և Մեծ Զաբ գետերի միջին և վերին հոսանքների միջև ընկած տարածքում։

---

66 IKA, S. 116, Ախլամու-արամեական ցեղերը և Սուտու ու Ցաուրի մյուս արևմտասեմական ցեղերը դեռևս Արիկդենիլուի ժամանակ (մ. թ. ա. 1308—1297 թթ.) պայքարել են Ասորեստանի դեմ, որպես Կադմուխի երկրի դաշնակիցներ (IAK, S. 62)։

67 Պայմանագիրը մեզ հասել է արքաներին և եգիպտերեն լեզուներով։ Աքքադերեն օրինակը տե՛ս PDK, № 8, S. 112; խեթերեն օրինակը տե՛ս ХИДВ, М., 1963, с. 126։ Պայմանագրի կնքումից 13 տարի անց Խաթուսիլի III-ը իր դստերը կնության է տալիս Եգիպտոսի Ռամսես II փարավոնին։ Տե՛ս A. Goetze The Struggle..., p. 47.

68 Տե՛ս IAK, S. 116.

69 A. Goetze. The Struggle..., p. 50.

70 IAK, S. 112—116

քում[71]։ Ուրուատրի (Ուրատրի) անունից, ինչպես ենթադրվում է, առաջացել է այդ տարածքում գտնվող հին հայկական Այտրուանք-Էրետրեյա գավառի անվանումը[72]։

Մուծրու (Մուսրու) երկիրը առաջին անգամ հիշատակվում է Ասորեստանի Աշշուրուբալիտ I թագավորի (մ. թ. ա. 1354—1319 թթ.) իշխանության ժամանակաշրջանում։ Այս երկիրը իր Արինա կենտրոնական քաղաքով, ըստ Ադադներարի I-ի, Սալմանասար I-ի և Թիգլատպալասար I-ի արձանագրությունների ավյալների տեղադրվում է Մեծ Զաբ գետի վերին հոսանքի շրջանում[73], դեպի Ուրմիո լիճ տանող ճանապարհի վրա, որտեղ ավելի ուշ ասսուրական թագավորները, սկսած Սալմանասար III-ից հիշատակում ես Մուսասիր (Սուծաշիր) քաղաք-երկիրը, որը համապատասխանում է ուրարտական արձանագրությունների Արգինի քաղաքին՝ ուրարտական Խալդի աստծու պաշտամունքային կենտրոնը։ Օգնելով ասսուրական և ուրարտական աղբյուրների տվյալներից հետազոտողների մեծամասնության կարծիքով Մուսրու, Սուսասիր և Արգինի միևնույն քաղաք-երկրի տարբեր անվանաձևերն են[74]։

Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան այս հատվածում չի ստեղծվում հակաասսուրական միացյալ մի բանակ, ուստի Սալմանասար I-ը առանց լուրջ դիմադրության հանդիպելու ավերում է քաղաքները և գերեվարում է հարյուրավոր մարդկանց։ Այստեղ իր բանակը լրացուցիչ ռազմամթերքով ապահովելուց հետո, Ասորեստանի թագավորը շարժվում է դեպի արևմուտք և ներխուժում է Միտանիի սահմանները։ Այս մասին Սալմանասար I-ը գրում է.

«...Երբ մեծ աստվածների հրամանով, Աշշուրի իմ տիրոջ պատկառելի ուժով Խանիգալբատ (Միտանի) երկիր ես գնացի և բացեցի անմատչելի ճանապարհը և դժվարանցանելի լեռանցքները, Շատտուարա, Խանիգալբատ երկրի թագավորը խեթթերի և ախլամյացիների զորքի հետ շրջապատեց լեռանցքները և իմ ջրարբը գրավեց։ Իմ զորքի ծարավ ու հոգնած եղած պահին իրենց բազմաթիվ զորքով դաժանորեն հարձակվեցին, բայց նրանց պարտությյան մատնեցի նրա բազմաթիվ ու մեծաքանակ զորքից անթիվ սպանեցի։ Ինչ վերաբերում է նրան, սուր նետերով մինչև մայրամուտը հետապնդեցի։ Նրանց ջոկատները կոտորեցի։ 14400 նրանցից կենդանի մնացածներին կուրացրի, գերեվարեցի։ Նրա ինը ամուր բերդերը և նրա մայրաքաղաքը ես նվաճեցի։ Նրա 180 քաղաքները բլրի և ավերակի վերածեցի, խեթթերի և ախլամյացիների զորքը՝ նրա օգնականներին գառի պես մորթեցի։ Այն ժամանակ Տայգա քաղաքից մինչև Իրրիդե քաղաքը, Կաշիարի լեռների շրջակայքից մինչև էլուխատ քաղաքը, Սուդա բերդից, Խարբան բերդից մինչև Գարգամիշ (Կարքեմիշ), որը Փուրատուի (Եփրատ) ափին էր։ Նրանց երկրները ոչնչացրի և նրանց մնացած քաղաքները ես հրկիզեցի...»[75]։

Այսպիսով ասսուրա-միտաննական պատերազմում մ. թ. ա. 1258 թ. Միտանիի, խեթական պետության, Կարքեմիշի և ախլամու-արամեական ցեղերի միացյալ ռազմական ուժերը ծանր պարտության են մատնվում։ Միտաննիում վերանում է թագավորական իշխանությունը։ Միտաննին, Կարքեմիշը, Կադմուխին և Հայկական լեռնաշխարհի ծայր հարավ-արևմտյան շրջանները ընդգրկվում են Ասորեստանի ազդեցության ոլորտը։

---

71 Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, 1971, էջ 280։

72 Նույն տեղում։

73 Նույն տեղում։

74 АВИПУ, № 2, прим. 9; УКН, с. 417; В. Н. Арутюнян. Топ. Урарту, с. 144—145.

75 IAK, S. 116—118.

## ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

АВНИУ — И. М. Дьяконов. Ассиро-вавилонские источники по истории Урарту.—ВДИ, 1951, № 2—4.
УКП — Г. А. Меликишвили. Урартские клинообразные надписи. М, 1960.
ХИДВ — Хрестоматия по истории Древнего Востока.
AIO — Archiv für Orientforschung.
AM — A. Goetze. Die Annalen des Muršiliš.—MVAG, 38, 1933.
ARI — A. K. Grayson. Assyrian Royal Inscriptions, I, II, Wiesbaden, 1972, 1976.
CAH — The Cambridge Ancient History.
IAK — E. Ebeling, B. Meisner, E. F. Weinder. Die Inschriften der altassyrischen Könige. Leipzig. 1926.
JCS — Journal of Cuneiform Studies.
JNES — Journal of Near Eastern Studies.
KUB — Keilschrifturkunden aus Boghazkoi.
MVAG — Mitteilungne der Vorderasiatisch—Agyptischen Gesellschaft.
PAR — E. Forrer. Die Provinzeinteilung des assyrischen Reiches, Leipzig, 1920.
PDK — E. F. Weidner. Politische Dokumente aus Kleinasien (Die Staatsvertrage in akkadischer Sprache aus dem Archiv von Boghazkoi). Leipzig, 1923.
PRU — J. Nougayrol. Le Palais royal d'Ugarit. IV, Paris, 1956.
RLA — Reallexikon der Assyriologie.

## ПОЛИТИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ МИТАННИ И СОСЕДНИХ ЦАРСТВ В КОНЦЕ XIV — ПЕРВОЙ ПОЛОВИНЕ XIII вв. до н. э.

*Г. М. АВЕТИСЯН*

### Резюме

В статье рассматриваются вопросы военно-политических взаимоотношений между Хайаса-Аззи и Хеттским царством в период правления Аннипа и Мурсили II (1325—1303 гг. до н. э.). Показано, что несмотря на большие военные силы, хеттскому царю не удалось присоединить Хайаса-Аззи к своим владениям. Выяснено, что с одиннадцатого года царствования хеттского царя Мурсили II на западной части Армянского нагорья происходили большие перемены. В рамках племенного союза Хайаса-Аззи формировались новые небольшие по территории государственные образования — Дуккамма, Халимана, Цухму (Сухму), Куммаха и др. В первой половине XIII в. до н. э. политическая обстановка в Передней Азии осложнилась. Главными событиями к этому времени являются война между Египтом и Хеттским царством и военные походы ассирийцев в Митанни и на территорию Армянского нагорья. Рассматриваются процессы этих военных действий, в ряде случаев удается представить события в новом освещении и уточнить их хронологию.